«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը պատմություն առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Վալենտինա Զոհրաբի Միրոյան

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2023

Թեմա՝ Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը պատմություն առարկայի դասավանդման գործընթացում

Հարց՝ Կարելի՞ է արդյոք պրոբլեմային ուսուցումը դիտարկել որպես իմացական նպատակ հարուցող և այդ նպատակին հասցնող գործընթաց պատմություն առարկայում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 6
ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ 8
ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ 10
ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՄԸ ՊԱՏՄՈԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ 12
ԴԱՍԻ ՊԼԱՆ 15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18
ՆԵՐԴԻՐ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նորօրյա դպրոցի ուսուցչին արդյունավետ դասավանդման համար անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործմանը ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողությունը և հմտությունը:Այսօր էլ պետական և ազգային խնդիր է համարվում կրթության համակարգի, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը, ուսուցման տարբեր ձևերի կիրառումը: Ուսումնասիրելով պրոբլեմային ուսուցմնա մեթոդաբանությունը նպատակ ունեի սովորողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, սովորեցնել կիրառել իրենց կողմից ձեռք բերված գիտելիքները: Կարծում եմ պրոբլեմային ուսուցումը ունի իր առավելությունները և նպաստում է դասի արդյունավետության բարձացմանը: Ժամանակակից կրթական հայեցակարգերում խրախուսվում են ուսուցման այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք առավել չափով են նպաստում սովորողների կողմից գիտելիքի հայտնաբերման գործընթացին: Այդ առումով պրոբլեմային ուսուցումը առաջատար տեղ ունի: Պրոբլեմային է համարվում այն ուսուցումը, որի ընթացքում սովորողներն իրենց ունեցած գիտելիքների հիման վրա լուծում են պրոբլեմային խնդիր, հաղթահարում պրոբլեմային իրավիճակներ, որոնում գործողության նոր եղանակներ, նրանք ուսուցչի ղեկավարությամբ կարգավորում են իրենց գործունեությունը, գործադրում պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական կամ հետազոտական մեթոդներ, ինքնուրույն ձևակերպում իրենց եզրակացությունները: Պրոբլեմային ուսուցման գլխավոր նպատակը սովորողների տրամաբանական մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացումն է, որն կարելի է իրագործել պրոբլեմային խնդիրներ լուծելու, պրոբլեմային իրավիճակները հաղթահարելու միջոցով:

Պրոբլեմային ուսուցման էությունը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է: Այն արթնացնում և ակտիվացնում է սովորողների մտածական գործունեությունը,

հնարավորություն է ընձեռում ստեղծված իրավիճակը գիտակցելու, ունեցած առաջադրանքը ընկալելու, ունեցած գիտելիքները փորձակելու,գործողության նոր եղանակներ հայտնաբերելու, պրոբլեմի լուծման վերջնական նպատակին հասնելու համար:

Խաչվող հասկացություններ՝

1.Օրինաչափություն

2.Պատճառ, հետևանք

3.Տարածություն և ժամանակ

Հետազոտության թեմային առընչվող բնագավառները

1.Մանկավարժություն

2.Հայոց պատմություն

3.Համաշխարհային Պատմություն

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պրոբլեմային ուսուցումը սկզբնավորվել է դեռևս անտիկ ժամանակաշրջանից : Դեռևս Ք. ա. 5-րդ դարում Սոկրատեսը իր սաներին սովորեցնում էր տրամաբանորեն մտածել: Նրանցից պահանջում էր միայն ու միայն այդ ուղիով որոնել ու հայտնագործել ճշմարտությունը: Ավելի ուշ ժամանակներում Ռուսոն ուսուցման ընթացքում սովորողների համար ստեղծում էր այնպիսի իրավիճակներ որ նրանք ստիպված կատարեն ճանաչողական գործողություններ: Հ. Պեստալոցին սովորողների ուսուցումը այնպես էր կազմակերպում, որ նրանք գիտելիքները իրենք հայտնագործեն: Ահա այդպես է ձևավորվել պրոբլեմային ուսուցումը, սակայն նշվածներից ոչ մեկը ուսուցումը չի անվանել պրոբլեմային:

Պրոբլեմային ուսուցումը առաջին անգամ տեսականորեն ու գործնականորեն մշակել է ամերիկացի մանկավարժ Ջոն Դյուին: Նա քննադատությամբ հանդես եկավ բացատրական – ցուցադրական ուսուցման դեմ և առաջարկեց ուսուցման նոր մոդել,որի միջոցով ուսուցիչը կարող է կազմակերպել սովորողների ուսումնական որոնողական գործունեությունը:

Ըստ ուսուցման այդ նոր մոդելի սովորողները ինքնուրույնաբար են լուծում ուսուցման ընթացքում առաջացած դժվարությունները, հայտնագործում իրենց կողմից որոնվող գիտելիքները: Նրանք սովորում էին առաջադրել խնդիրներ և գտնել դրանց լուծման ուղինեը, կիրառել յուրացրած գիտելիքները: Նոր ժամանակներում պրոբլեմային ուսուցման տեսությունը և պրակտիկան մշակեցին ռուս գիտնականներ Մախմուտովը, Կուդրյավցևը, լեհ գիտնական Օկոնը և ուրիշներ:

Պրոբլեմային ուսուցման գլխավոր առանձնահատկությունը այն է ,որ ուսուցիչը կազմակերպում է սովորողների որոնողական գործունեությունը, որի միջոցով նրանք յուրացնում են նոր գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, զարգանում է իրենց տրամաբանական մտածողությունը, որոնողական ընդունակություններն ու հետազոտական ակտիվությունը, ձևավորում ստեղծագործական կարողությունները: Պրոբլեմային ուսուցման ընթացքում փոխվում է ուսուցման և դասավանդման բնույթը: Որպեսզի ուսուցիչը ճիշտ ղեկավարի պրոբլեմային ուսուցման ընթացքը, նա պետք է գիտակցի, լավ ըմբռնի ու հասկանա պրոբլեմային ուսուցման հիմնական հասկացությունների իմաստը, գործառույթները:

Պրոբլեմը լուծելու պրոբլեմային իրավիճակը հաղթահարելու նպատակով ուսուցիչը առաջադրված պրոբլեմի շուրջ սովորողներին հաղորդում է որոշ տեղեկություններ, կազմակերպում նրանց փորձը, նրանց մեջ արթնացնում պրոբլեմի լուծման, պրոբլեմային իրավիճակի հաղթահարման համար անհրաժեշտ

գիտելիքները: Եզրափակիչ փուլում ուսուցչի ղեկավարության պայմաններում սովորողները ձևակերպում են այն գիտելիքները,որոնք յուրացրել են առաջադրված պրոբլեմը լուծելու, ստեղծված պրոբլեմային իրավիճակը հաղթահարելու միջոցով:

Պրոբլեմային ուսուցումը ուսուցչի ղեկավարությամբ սովորողների հետազոտականի ինքնուրույն աշխատանք է: Այսօրինակ գործունեության ընթացքում մշակվում և ամրապնդվում են սովորողների նոր գիտելիքները, կարողությունները, հմտությունները, զարգացնում ճանաչողական ակտիվությունը հետաքրքրությունները, ստեղծագործական մտածողությունը և անձնային այլ որակները:

Պրոբլեմային ուսուցման կիրառման դեպքում ուսուցիչը սովորողին ոչ թե պատրաստի գիտելիք է տալիս այլ ներկայացնում է խնդիրը կամ հարցը, որը պիտի լուծում գտնի: Նա սովորողին որոշակի հիմնախնդիր առաջարկելով հանդերձ, ձգտում է հետաքրքրել նրան, տվյալ խնդիրը լուծելու նախանձախնդրություն է առաջացնում:

Պրոբլեմային ուսուցման հիմնաքարը որոշակի իրավիճակի ստեղծումն է: Այստեղ շատ կարևոր է, որ լուծման համար ներկայացվող առաջադրանքը համապատասխանի սովորողների կարողություններին, նրանց ունեցած գիտելիքներին, այլապես աշխատանքը կարող է տապալվել:

Պրոբլեմային ուսուցման հիմանական կատեգորիաներն են `

- Պրոբլեմը այն տեսական կամ գործնական խնդիր է, որը պահանջում է լուծում ուսումնասիրում հետազոտում:
- Ուսումնական պրոբլեմը այն ճանաչողական մտավոր խնդիր է, որն առաջադրվում է ուսումնական ծրագրերից, գիտության կողմից մշակված մարդկությանը հայտնի օրենքներից: Դա միայն աշակերտի համար է նորություն այն իմաստով, որ նա իր համար է վաղուց հայտնագործվածը:
- Պրոբլեմային հարցը այն հարցն է,որը առաջացնում է ճանաչողական կամ մտավոր դժվարություն, որի պատասխանը չկա սովորողների գիտելիքներում և ոչ էլ առկա տեղեկատվության մեջ:
- Պրոբլեմային իրավիճակը այն իրավիճակն է ,որը սովորողի համար ստեղծում է դժվար կացություն, նրա կողմից փաստի, երևույթի, գործընթացի, խնդրի անհայտը որոնելու պահը որը լի է մտքերի հակասություններով բախումներով և կոնֆլիկտներով:

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Պրոբլեմային ուսուցման դասի ընթացքը: Պրոբլեմային դասը ունի հետևյալ ընթացքը. Ուսուցիչը ուսումնական նյութից առանձնացնում է պրոբլեմը: Ինքը կամ սովորողները ձևակերպում են պրոբլեմը: Առաջադրված պրոբլեմից բխող պրոբլեմային իրավիճակը ստեղծում է դժվար կացություն: Սովորողների գիտելիքները չեն բավականացնում: Ստեղծվում է հակասություն իմացածի ու անհայտի միջև, որն էլ դառնում է ուսուցման պրոցեսի շարժիչ ուժը: Սովորողները սկսում են մտածել: Այդ պահից սկսած հուզական վիճակ են ապրում: Ձևավորվում նրանց հետաքրքրությունը պրոբլեմի նկատմամբ:Նրանց մեջ աստիճանաբար ի հայտ է գալիս մտավոր ակտիվություն, ներքին դիրքորոշում և ձգտում: Լինում են սովորողներ, որոնք ունենալով բարձր ընդունակություններ, անմիջապես կազմում են մտավոր պլան և անցնում գործողությունների: Սակայն սովորողների ճնշող մեծամասնությունը դժվարանում է լուծել պրոբլեմը, չգիտի ինչից սկսել: Ուսուցիչը նրանց առաջադրում է օգնող և ուղորդող հարցեր, երբեմն էլ ուղղակի հուշում: Սա հնարավորություն է տալիս սովորողներին գտնելու և լուծելու պրոբլեմի մի մասը: Սակայն առաջանում են ենթապրոբլեմներ, որոնց լրիվ լուծումից է կախված ստեղծված պրոբլեմային իրավիճակի հաղթահարումը: Ուստի սովորողները վերանայում են իրենց մտավոր պլանը, գործողության եղանակներն ու պայմանները: Նրանք սկսում են կատարել մտավոր գործառություններ: Նրանց ճանաչողական գործընթացը զարգանում է աստիճանաբար փուլերով որոնցում գործադրվում են էվրիստիկական, որոնողական, հետազոտական մեթոդներ:

Պրոբլեմային իրավիճակները հաղթահարելիս սովորողները առաջ են քաշում վարկածներ, ստուգում դրանց ճշգրտությունը, հավաքում փաստեր, օգտվում տեղեկատվությունից: Այդ ընթացքում իմաստավորվում են ձեռք բերված գիտելիքները, որոնք վերածվում են համոզմունքների: Սովորողները օգտվում են նաև միջառարկայական կապերից, բացահայտում են առարկաների երևույթների հարաբերությունները, պատճառահետևանքային կապերը և փոխկապակցությունները:

Վերջում ստուգում են լուծված պրոբլեմի պատասխանը, հանգում որոշակի եզրակացությունների: Կատարվում է ամփոփում: Սովորողների ինքնուրույն մտածողության ձևավորումը ու զարգացումը միշտ էլ համարվել են ուսուցման գործընթացի կարևոր նպատակները: Դեռևս Կ. Դ. Պուշինսկին լուրջ ուշադրություն է դարձնում աշակերտին ինքնուրույն մտածողության զարգացմանը:

Այս խնդրի լուծման ճանապարհին մեծ դեր ունի պրոբլեմային ուսուցումը, որի բաղադրամասերն են պրոբլեմային իրավիճակների ստեղծումը և իմացական խնդրի ձևակերպումը, սովորողի մոտ ինքնուրույն մտածողության խթանումը, որն ուղղված կլինի իմացական խնդրի լուծմանը ու նոր գիտելիքների ձեռքբերմանը: Սա նշանակում է պրոբլեմային ուսուցումը ոչ թե պատրաստի գիտելիքների վրա հենված կրթությունն է, այլ լուծման հետազոտական քալեր առաջադրող գործընթացը: Եթե սովորողը ունի այս կամ այն հարցի պատրաստի պատասխանը, ապա ունեցած գիտելիքները հիշելուց և վերարտադրելուց բացի նրանից մտածողության ջանքեր չեն պահանջվում: Իմացական պրոբլեմը սովորողին դուրս է բերում իր ունեցած գիտելիքների շրջանագիծ և փոխադրում դեռևս անհայտ որոնում պահանջող մտածողական գործունեության ոլորտ, այսպիսով կարևոր է ուսումնական գործընթացում իմացական խնդրի առկայությունը : Սակայն այն պրոբլեմային իրավիճակի բնութագրիչներից մեկն է, որովհետև դժվար չէ սովորողին դուրս բերել իր ունեցած գիտելիքների շրջանակներից, սակայն նրա մտածողությունը կարող է մնալ չընդգրկված:

Սովորողի իմացական գործունեությունը և այն խնդրի լուծմանը նպատակաուղղելու համար նրանում պետք է ինչ-որ բան հայտնի լինի, այսինքն պետք է տրվեն նաև մտածողությունը ուղղորդող տվյալներ: Պրոբլեմային իրավիճակը պետք է ունենա նաև հոգեբանական էլեմենտ՝ փաստերը պետք է լինեն նոր և տպավորիչ, իսկ իմացական խնդիրը՝ անսովոր, արտառոց ու հետաքրքիր, այն պետք է հետաքրքրի սովորողին և նրա մեջ առաջացնի իմացական որոնման ձգտում:

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Պրոբլեմայի ուսուցման մեջ սովորողի ստեղծագործական կարողությունները զարգացնելու համար կիրառվում են տարբեր մեթոդներ.

Պրոբլեմային շարադրանքը անցում է կատարում կատարողականից դեպի ստեղծագործական գործունեություն:

Մեթոդի էությունն այն է, որ դասավանդողը ներկայացնում է պրոբլեմը և ինքն էլ լուծում է՝ ցույց տալով դատողական մտքի ընթացքը ճանաչողության գործընացում: Սովորողն այդ ընթացքում հետևում է շարադրանքի տրամաբանությանը՝ յուրացնելով պրոբլեմի լուծման փուլերը: Այդ ընթացքում նրանք ոչ միայն ընկալում են գիտակցում և մտապահում են պատրաստի գիտելիքները, եզրակացությունները, այլ նաև հետևում են ապացույցների տրամաբանությանը, դասավանդողի մտքի ընթացքին, ընդ որում՝ դասվանդողին կարող է փոխարինել տեխնիկական որևէ միջոց՝ կինո, հեռուստատեսություն, գրքեր և այլն: Չնայած այս մեթոդի կիրառության դեպքում ակտիվ մասնակից չեն, այլ միայն հետևում են մտքի ընթացքին, նրանք սովորում են ճանաչողական հիմնախնդիրներ:

Ճանաչողական գործունեության առավել բարձր աստիճան է մասամբ որոնողական Կամ էվրիստիկ մեթոդը: Այս դեպքում սովորողներն ինքնուրույն են լուծում ուսումնական բարդ խնդիրը ոչ թե սկզբից մինչև վերջ, այլ միայն մասամբ: Դասավանդողը սովորողներին ընդգրկում է պրոբլեմի լուծման որոնման գործընթացի մեջ: Գիտելիքների մի մասը հաղորդում է դասավանդողը որոշ մաս լրացնում են սովորողները՝ պատասխանելով տրված հարցերին կամ էլ լուծելով հիմնախնդիրը: Ուսումնական գործընթացը զարգանում է հետևյալ կերպ դասավանդող-սովորող-դասավանդող-սովորող և այլն: Այսպիսով ուսուցման մասամբ որոնողական մեթոդը հանգեցնում է նրան, որ ողջ գիտելիքը չէ որ սովորողին ներկայացվում է պատրաստի վիճակում, պետք է հասնել ինքնուրույն. դասավանդողի գործունեության մեջ մտնում է պրոբլեմային իրավիճակի լուծման Ընթացքի օպերատիվ կառավարումը: Այս մեթոդի ձևափոխություններից մեկն էլ էվրիստիկ զրույցն է: Ուսուցման հետազոտական մեթոդը նախատեսում է սովորողների գիտելիքների ստեղծագործաբար յուրացումը: Դրա էությունը հետևյալն է՝. դասավանդողը սովորողների հետ ձևակերպում է հիմնախնդիրը (պրոբլեմը). սովորողները ինքնուրույնաբար լուծում են այն. դասավանդողը օգնում է միայն այն դեպքում, երբ պրոբլեմի լուծման ճանապարհին դժվարություններ են ի հայտ գալիս: Այսպիսով հետազոտական մեթոդը ոչ միայն գիտելիքների ամփոփման, այլև գիտելիքը ինքնուրույնաբար ձեռք բերելու, առարկան կամ երևույթը

ուսումնասիրելու, եզրահանգումներ կատարելու և գիտելիքները ու կարողությունները կյանքում կիրառելի նպատակներով որոնողական-հետազոտական գործնեության կազմակերպումն է:

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Հասարակությունը խնդիր է դրել կրթել ազատ, զարգացած և կրթված անհատականություն, որն ընդունակ է ապրել և ստեղծագործել անընդհատ փոփոխվող աշխարհում: Կրթությունը կոչված է օգնելու անհատին ինքնազարգացման մեջ. սովորեցնել սովորել, գործել տարբեր իրավիճակներում, շփվել, ապրել ներդաշնակ իր հետ, հասարակության մեջ: Անհատականության զարգացումը կախված է ոչ միայն մարդու բնածին կարողություններից, սոցիալական միջավայրից, այլև սեփական դիրքից, վերաբերմունքից: Այդ որակների դաստիարակման գործում մեծ դեր է հատկացվում, մասնավորապես, պատմության դասերին:

Դասավանդման պրակտիկայում ուսուցիչները հանդիպում են որոշակի դժվարությունների. նախ՝ ունենալով սահմանափակ հնարավորություններ՝ օգտագործելու պատմության մեջ ստացած գիտելիքները դասարանից դուրս, կորցնում են հետաքրքրությունը այն ուսումնասիրելու նկատմամբ. երկրորդ, ավանդական մեթոդաբանությունը կիրառելիս նկատվում է սովորողներիի անկախության մակարդակի նվազում: Այսպիսով, հակամարտություն է առաջանում ուսուցման նպատակների և ուսուցման ոճի միջև, ինչը խանգարում է երեխայի սովորելու կարողության զարգացմանը:Այս հակասության լուծումը խնդրի վրա հիմնված ուսուցման տեսության մեջ է (հեղինակներ Լ.Ի. Լերներ, Ի.Ի. Մախմուտով. Մ.Ն. Սկատկին): Խնդրի վրա հիմնված ուսուցումը ուսուցման գործընթացում սովորողների զարգացման համակարգ է, որը հիմնված է ուսուցման մեջ կրթական խնդիրների օգտագործման և սովորողների ներգրավվածության վրա՝ ակտիվորեն մասնակցելու այդ խնդիրների լուծմանը: Կրթական խնդիր հասկացվում է որպես առաջադրանք, հարց կամ առաջադրանք, որի լուծումը հնարավոր չէ ստանալ պատրաստի մոդելից:Սովորողից պահանջվում է ինքնուրույնություն և ինքնատիպություն դրսևորել: Ոչ թե անցյալի և ներկայի վերարտադրողական ընկալում, այլ սեփական քաղաքացիական դիրքորոշման ձևավորում՝ փաստի, իրադարձության սեփական բացահայտման միջոցով, դրա վերաիմաստավորումը հնարավոր է միայն խնդրահարույց ուսուցման մեթոդի կիրառմամբ, որն ապահով է սովորողների բարձր մոտիվացիա .

Օգտագործելով խնդրահարույց մեթոդը՝ պետք է հաշվի առնել յուրաքանչյուր դասարանի սովորողների պատրաստակամությունը՝ ընկալելու խնդրահարույց նյութը՝ գիտելիքների ընդհանուր մակարդակը, դասի տրամադրությունը, այս դասարանում խնդրահարույց ուսուցման կիրառման փորձը: Խնդիրների վրա

հիմնված ուսուցումն օպտիմալացնելու համար անհրաժեշտ է փոփոխականություն, այսինքն՝ նյութի ուսումնասիրման խնդրի վրա հիմնված մոտեցման այնպիսի տարբերակի ընտրություն, որը լավագույնս համապատասխանում է այս դասի մակարդակին: Սովորողներիների մոտիվացիայի բարձր մակարդակ ունեցող դասարանում, փաստ ներկայացնելուց հետո, կարելի է մեկը մյուսի հետևից խնդիրներ դնել, ցածր մոտիվացիա ունեցող դասարանում կարելի է բացատրել նյութը և վերջում անցկացնել խնդրահարույց բնույթի հարցում: Նոր նյութը բացատրելիս կարելի է օգտագործել են խնդրի վրա հիմնված ուսուցման երկու ձև՝ խնդրի ներկայացում և որոնման զրույց: Խնդրի ձևակերպման ընթացքում խնդիրը դնում և լուծում է ուսուցիչը: Ոչ թե պարզապես ներկայացնում եմ նյութը, այլ արտացոլում եմ, դիտարկում եմ հնարավոր մոտեցումներն ու լուծումները: Սովորողները հետևում են տրամաբանության, վերլուծության տրամաբանությանը և ավելի խորն են սովորում նյութը: Ուսուցիչը օգտագործում է խնդրի հայտարարություն, երբ նյութը լիովին նոր է և չափազանց բարդ: Խնդրի դրույթը կարող է օգտագործվել 9-րդ, դասարանի պետական խորհրդանիշների պատմությունն ուսումնասիրելիս Օրինակ, Ինչ են խորհրդանշում ՀՀ զինանշանի վրա պատկերված առյուծը և արծիվը: Սովորողները ներկայացնում են իրենց կարծիքները:

Ուսուցիչը տալիս է ուղղորդող հարցեր,որից հետո սովորողները եզրակացնում են, որ առյուծը և արծիվը խորհրդանշում են Արևմտյան և Արևելյան Հայաստանները:

Որոնողական զրույցի իմաստը նախօրոք պատրաստված հարցերի համակարգի միջոցով սովորողներին ներգրավելն է դասին առաջադրված խնդիրների լուծմանը:Կարելի է օգտագործել այս ձևը այն դեպքերում, երբ սովորողներն ունեն անհրաժեշտ գիտելիքներ՝ առաջադրված խնդիրների լուծմանը ակտիվորեն մասնակցելու համար: Օրինակ, 9-րդ դասարանում ընդհանրացնող դասի սկզբում «Հայ ժողովուրդը երկրորդ աշխարհամարտի տարիներին 1939-1945թթ» թեմայով: Տալիս եմ խնդրահարույց բնույթի առաջադրանքներ՝ «Ինչու՞ պահանջվում է ինքնուրույնություն է հայ ժողովորդը մասնակցել պատերազմին, ի՞նչ նշանակություն ունեցավ խորհրդային ժողովրդի հաղթանակը Հայրենական մեծ պատերազմում, Ձեր կարծիքով ճիշտ էր արդյո՞ք հայ գործիչների որոշ շրջանակների գործունեությունը Գերմանիայի հետ»: Այս խնդիրը լուծելու համար ես դասարանը բաժանում եմ չորս ուսումնական խմբերի, 1-ին խումբը ուսումնասիրում է պատերազմի ընթացքը, 2-րդխումբ ուսումնասիրում է տնտեսության վերակառուցումը ըստ պատերազմական պահանջների, 3-րդ խումբը ուսումնասիրում է Հայկական դիվիզիաների կազմակերպումը և նրանց մարտական

ուղին, 4-րդ խումբը ուսումնասիրում սփյուռքահայերի մասնակցությունը ֆաշիզմի ջախջախմանը :Երբ խնդրահարույց է ներկայացվում նոր նյութի բովանդակությունը, նկատվում է, որ սովորողներն ավելի ակտիվ ու անկախ են դառնում:Որոշակի դասարանում խնդրահարույց ուսուցման մեթոդը կիրառելիս պետք է վստահ լինել, որ աշակերտները կարող են վերարտադրողական գիտելիքներ ձեռք բերել և ունեն որոշակի մեթոդը ժամանակատար է, և անտեղի է այն օգտագործել տնային առաջադրանքները ստուգելիս: Նոր խնդրի լուծման գործընթացում նախորդ դասերի նյութն ինքնին թարմացվում է: Օրինակ. 7-րդ դասարանում «Բյուզանդական կայսրություն» թեման սովորողներին ծանոթացնում եմ Հուստինիանոս կայսեր քաղաքականությանը՝ օգտագործելով փաստաթղթերի հատվածներ և ներկայացնում եմ թեմայի իմ սեփական ներկայացումը:

Հրավիրում եմ սովորողներին արտահայտել իրենց վերաբերմունքը այս տիրակալի նկատմամբ: Դասի ընթացքում սովորողները «հավաքում» են, գրի են առնում ուսուցչի մտքերը, լսում տեղեկատվությունը, որպեսզի համախմբման փուլում ողջամտորեն արտահայտեն իրենց կարծիքը: Խնդրի վրա հիմնված ուսուցման դասերի հետազոտական մթնոլորտը թույլ է տալիս սովորողներին ներգրավվել ակտիվ ճանաչողական գործընթացում: Ուսուցչի դերը փոխվում է. Նա խորհրդատու է, օգնական, դիտորդ, տեղեկատվության աղբյուր, համակարգող:

Ուսուցիչը դառնում է ուսանողների ինքնուրույն կրթական գիտելիքների կազմակերպիչը: Խորհրդային Հայաստանի մշակույթը 1920-1945 թթ. (9-րդ դասարան) խնդիրը կարելի է ձևակերպել է հետևյալ կերպ. «Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել Հայաստանի մշակույթում»: Խնդիրը դիտարկվել է փուլերով, աշխատանքի ընթացքում բացահայտվում են գրականության, երաժշտության, կերպարվեստի բնագավառում փոփոխություններ (աշխատանք խմբակային) Հավաքվում են բոլոր միջանկյալ եզրակացությունները, ամփոփում և պատասխանում են խնդրահարույց հարցին:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասարանը ՝ 11-րդ

Առարկան՝ Համաշխարհային պատմություն

Դասի թեման՝ Սառը պատերազմը

Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդում

Օգտագործվող միջոցներ՝ դասագիրք, տետր, համակարգիչ, քարտեզ

Պրոբլեմային հարց՝ Այսօր կա արդյո՞ք սառը պատերազմ

Դասի նպատակը՝ Նպաստել սովորողների գիտելիքների ձեռքբերմանը պատերազմից հետո ստեղծված միջազգային հարաբերությունների, հետպատերազմյան շրջանի գործիչների, երկբևեռ աշխարհի ձևավորման, տնտեսական մրցակցության հետևանքների ու առանձնահատկությունների և տեղական պատերազմների մասին:

Դասի խնդիրները՝ Նկարագրել աշխարհում ուժերի նոր դասավորությունը, Արևելյան և արևմտյան խմբավորումների ձևավորումը, վերհանել սպառազինությունների մրցավազքի հետևանքները:

Վերջնարդյունք՝ Կարողանա հասկանալ 2-րդ աշխարհամարտից հետո ստեղծ ված միջազգային հարաբերությունները,բնութագրել նշանավոր գործիչներին, քարտեզի վրա ցույց տալ աշխարհի խոշոր տերությունները, ներկայացնել ՆԱՏՕ-ի և Վարշավյան դաշինքի գործունեությունը, հիմնավորել ԽՍՀՄ-ի փլուզման անխուսափելիությունը, բացատրել Երրորդ աշխարհ հասկացությունը:

Դասի ընթացքը

1. Կազմակերպչական մաս

2. Մտագրոհ՝ հարցերի տեսքով

ա. Ի՞նչ է սառը պատերազմը

բ. Ի՞նչ է տաք պատերազմը

գ. Որո՞նք են սառը պատերազմի պատճառները

դ. Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին աշխարհում 2րդ աշխարհամարտից հետո

ե. Ո՞ր ասպարեզներում դրսևորվեց սառը պատերազմը

զ. Ո՞ր պետությունները դարձան աշխարհի քաղաքականության նոր կենտրոններ

3. Դասանյութի հաղորդում,կարճ դասախոսություն

4. Սովորողների օգնությամբ քննարկել և բացատրել Մարշալի պլանի արդյունքները

5. Սովորողների օգնությամբ քննարկել և բացատրել, ամրապնդել գծապատկերով Մարշալի պլան, ԱՄՆ, Եվրոպա

ա.Կարողացավ վերադարձնել իր պարտքը տոկոսներով

բ. Մինչև պարտքի մարումը Եվրոպային պահեց իր քաղաքական ազդեցության ոլորտներում

գ. Վերականգնվեց և զարգացավ Եվրոպական պետությունների տնտեսությունը

դ.Նրանք կարողացան վերադարձնել պարտքը ԱՄՆ-ին տոկոսներով: ԱՄՆ-ն եվրոպական երկրներին օգնեց իր քաղաքական և տնտեսական շահերից ելնելով: Նրան առավել կարևոր էր իր ազդեցության տակ պահել այդ երկրներին ԽՍՀՄի դեմ պայքարում, նաև վերադարձնել իր փողերը:

Պրոբլեմային հարցի քննարկում

Սովորողները քննարկում են ռուս-ամերիկյան հարաբերությունները, հիմնավորում և եզրակացնում, որ կա սառը պատերազմ: Անդրադառնում են Սիրիայի դեպքերին,ԱՄՆ-ի և Եվրոպայի վարած քաղաքականությունը ռուս-ուկրաինական պատերազմում:

Տնային հանձնարարություն - Դասը սովորել պատմել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած ուսուցում և մեթոդների կիրառում պետք է տանի սովորողներին դեպի գիտելիք: Գիտելիքների յուրացումը թույլ և ուժեղ սովորողների մոտ կատարվում է տարբեր ձևով: Մանկավարժը պետք է հաշվի առնի սովորողների ընդունակությունները,կարողությունները: Այդ տեսակետից հետաքրքիր է Բենջամին Բլյումի առաջարկած ուսուցման դասակարգումը:

Բլյումը գտնում է, որ ուսուցման ընթացքում սովորողը ոչ միայն ձեռք է բերում գիտելիքների հանրագումար և մտապահում, այլ նաև համեմատում է դրանք իր ունեցած գիտելիքների հետ,նոր գիտելիքները դարձնում է կիրառական,գնում է դեպի գիտելիքների խորացում և վերլուծություն:

Պրոբլեմային ուսուցումը մանկավարժական գործունեության մի միջոց է, որով իրականացվում է ուսուցչի և սովորողի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին, գիտելիքների ձեռքբերմանը, կարողությունների և հմտությունների զարգացմանը:

Պրոբլեմային ուսուցումը ունի նաև դաստիարակչական ֆունկցիաներ: Դրանցից են սովորողների ստեղծագործական հմտությունների դաստիարակումը, ձեռք բերված գիտելիքների ստեղծագործաբար օգտագործումը,ստեղծագործական գործի կուտակումը և այլն: Պրոբլեմային ուսուցումը օգնում է սովորողին դառնալ անկախ և ինքնուրույն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Յ.Ամիրջանյան «Մանկավարժություն» Երևան 2005 թ.

2. Է. Ջավարյան «Կենսաբանության դպրոցական դասընթացում պրոբլեմային ուսուցման կիրառման օրինակներ» «Մանկավարժություն» ամսագիր, Երևան 2008 թիվ

3. «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների մասնագիտական զարգացման վերապատրաստման դասընթացի բաշխման նյութեր

4. Դ. Ճարտարյան «Պրոբլեմային ուսուցման մեթոդներ»

5. М.И.Махмутов- Теория проблемно-развивающего обучения

ՆԵՐԴԻՐ

Ներկայացնում են գծապատկերներ ՆԱՏՕ-ի/1949թ./ և Վարշավյան դաշինքի/1955թ./ երկրների վերաբերյալ

ԱՄՆ

Մեծ Բրիտանիա

Թուրքիա

Իտալիա

Կանադա

Նորվեգիա

Ֆրանսիա

Դանիա

Արևմտ.Գերմանիա

Բելգիա

Իսլանդիա

Լյուքսեմբուրգ

Հունաստան

Պորտուգալիա

Վարշավյան Դաշինք-1955թ.

ԽՍՀՄ

Չեխոսլովակիա

Բուլղարիա

Հունգարիա

Լեհաստան

Ռումինիա

Արևելյան Գերմանիա